

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն 2013թ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իրականացնելու նպատակով հայտարարում է աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթ:

Մրցույթն անց է կացվելու 2013թ. մարտի 12-ից ապրիլի 12-ը:

Մրցույթի հայտերն ընդունվելու են 2013թ. փետրվարի 1-ից մարտի 4-ը (ներառյալ), յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-18:00-ը՝ ք. Երևան, Բայրոնի 1 հասցեում:

**Ֆինանսատնտեսական գործունեության իրականացնող աուդիտորական կազմակերպության հավակնորդները պետք է համապատասխանեն հետևյալ չափանիշներին.**

- Բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ: Ընդ որում, բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման 5 տարվա փորձի պահանջը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված և <http://firm-rankings.vrfinancial-news.com> կայքում տեղադրված ցանկում ներառված ըստ եկամտաբերության՝ լավագույն 10 աուդիտորական կազմակերպություններ),
- աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 5 Բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-ՓԻ-Էյ, ՍԻ-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական),
- աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-ՓԻ-Էյ, ՍԻ-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,

- Միևնույն պատասխանատու աուդիտորը չի կարող իրականացնել Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը, եթե տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:

**Վերոնշյալ չափանիշներին բավարարող հավակնորդները պետք է Բանկ ներկայացնեն իրենց հայտերը՝ հետևյալ բովանդակությամբ.**

- հավակնորդի տվյալները՝ անվանումը, գտնվելու վայրը (հասցեն), հեռախոսահամարը.
- հավակնորդի լիցենզիայի ռեկվիզիտները.
- հավակնորդի կողմից աուդիտի անցկացման փորձի մասին տեղեկություններ.
- համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված և <http://firm-rankings.vrլfinancial-news.com> կայքում տեղադրված ցանկում ներառված ըստ եկամտաբերության՝ լավագույն 10 աուդիտորական կազմակերպությունների ցանկի մեջ մտնելու մասին տեղեկություն.
- աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների որակավորման մակարդակի և աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ.
- պատասխանատու աուդիտորի աշխատանքային փորձի մասին տեղեկություն:

**Չայտերին կից պետք է ներկայացվեն.**

- աուդիտորական կազմակերպության լիցենզիայի պատճենը.
- պատասխանատու աուդիտորի միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ EY-ՍԻ-ՍԻ-Էյ, ՍԻ-ՓԻ-Էյ, ՍԻ-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի (վկայականի) պատճենը.
- աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ EY-ՍԻ-ՍԻ-Էյ, ՍԻ-ՓԻ-Էյ, ՍԻ-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթերի (վկայականների) պատճենները կամ Չայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Չայաստանի Չանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորումը հաստատող փաստաթղթերի (վկայականների) պատճենները.
- աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագիծը.
- աուդիտորական ծառայությունների համար գնառաջարկը:

Բանկը սույն հայտարարության մեջ նշված չափանիշներին բավարարող հավակնորդների ցանկից ՀՀ օրենսդրությամբ և իր ներքին իրավական ակտերով սահմանված կարգով ընտրում է արտաքին աուդիտին, որից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս հետ կնքում է աուդիտորական ծառայությունների մատուցման մասին պայմանագիր: Պայմանագրի համաձայն Արտաքին աուդիտը պարտավորվում է Բանկի առաջադրանքով 2012թ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով իրականացնել աուդիտորական գործունեություն, իսկ Բանկը պարտավորվում է վճարել դրա դիմաց: Այն դեպքում, երբ Բանկի կողմից ընտրված հավակնորդը կհրաժարվի Բանկի հետ կնքել պայմանագիր, վերջինս Բանկի իրական վճասները փոխհատուցելու համար պարտավորություն կստանձնի:

**Սույն հայտարարությունը հանդիսանում է օֆերտա անելու հրավեր, իսկ հավակնորդների կողմից ներկայացված հայտերը հանդիսանում են օֆերտա Բանկին:**

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ

հասցե՝ 0009, ք.Երևան, Բայրոնի 1

Հեռախոս՝ (374-10) 31-88-88

Հեռապատճեն՝ (374-10) 54-34-85

Էլ.-փոստ՝ [acba@acba.am](mailto:acba@acba.am)

Կայք՝ <http://www.acba.am>